

**ՖՈՒՏԲՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ, ՀՖՖ-Ի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՊԱՀԱՆՁՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՄԵԴԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1

- 1.1.«Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների, ՀՖՖ-ի հավատարմագրում պահանջող միջոցառումների /այսուհետ **Միջոցառումներ** / ժամանակ Մեդիայի ներկայացուցիչների հավատարմագրման կարգը» /այսուհետ **Կարգ** / մշակված է ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի համապատասխան կանոնակարգերի, ուղեցույցերի, դեկավարող փաստաթղթերի հիման վրա եւ բխում է դրանցում միջազգայնորեն ամրագրված սկզբունքներից:
- 1.2.Սույն **Կարգը** կարգավորում է Մեդիայի ներկայացուցիչների հավատարմագրումը **Միջոցառումների** լուսաբանման նպատակով, նրանց իրավունքներն ու պարտականությունները, Հավատարմագրից զրկելու հիմքերը եւ կարգը, **Միջոցառումների** լուսաբանման հարցերը, ինչպես նաև ֆուտբոլում Մեդիայի ներկայացուցիչների գործունեության հետ կապված այլ հարցեր:

ՀՈԴՎԱԾ 2

- 2.1.**Միջոցառումներին** Մեդիայի ներկայացուցիչների հավատարմագրումն իրականացվում է բացառապես **ԱՌՑԱՆՑ**, ՀՖՖ մամուլի քարտուղարության կողմից, ՀՖՖ ԱՌՑԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՐԹԱԿԻ միջոցով եւ հանդիսանում է ՀՖՖ-ի բացառիկ իրավունքը:
- 2.2.Հավատարմագրման արդյունքում **Մեդիայի ներկայացուցիչներին տրվում են ՀԱՏՈՒԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ:**
- 2.3.ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻԸ հավաստում է Մեդիայի ներկայացուցչի հավատարմագրված լինելը:
- 2.4.Յուրաքանչյուր ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ՎԱՎԵՐ է միայն այն միջոցառման համար, որի համար իրականացվել է ԱՌՑԱՆՑ հավատարմագրումը:

2.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ տեսակը, հավատարմագրված միջոցառման տեղը եւ օրը նշվում է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա:

2.6. Մեդիայի ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում սույն **Կարգում** և հավատարմագրման հետ առնչվող այլ փաստաթղթերում ամրագրված կանոնների խախտման հետեւանքում ՀՖՖ-ին հասցված վնասի համար:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

ՀՈՂՎԱԾ 3

3.1. Եթե ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՅՏ-երի քանակն ավելին է, քան

Միջոցառման տեղերի առկայությունը, ապա ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ տրվում են առաջնահերթության հետեւյալ սկզբունքով.

- ՀՖՖ-ի եւ Ֆուտբոլի ազգային հավաքական թիմերի պաշտոնական հեռարձակող Մեդիա:

- ՀՖՖ-ի եւ ֆուտբոլի ազգային հավաքական թիմերի պաշտոնական գործընկեր Մեդիա:

- ՀՖՖ-ի եւ ֆուտբոլի ազգային հավաքական թիմերի հովանավոր Մեդիա:

- Ինտերնետ ռեսուրսներ, որոնք ունեն բացառապես ֆուտբոլային/մարզական ուղղվածություն:

- Ռադիոընկերությունների ֆուտբոլային/մարզական հաղորդումներ/հաղորդաշարեր:

- Ամենօրյա ֆուտբոլային թերթեր:

- Ֆուտբոլային շաբաթաթերթեր:

- Ամենօրյա մարզական թերթեր:

- Հայաստանի տարածքի մինչև 80 % ծածկույթով հեռարձակվող հեռուստաընկերությունների ֆուտբոլային/մարզական հաղորդումներ/հաղորդաշարեր:

- Այլ մեդիա ռեսուրսներ

3.2. Սույն Կարգի 3.1. կետում թվարկված Մեդիայի ղեկավարները կարող են հավատարմագրել 2 /երկու/ լրագրող և 1 /մեկ/ ֆոտոթղթակից:

3.3. Մնացած բոլոր դեպքերում Մեդիայի ղեկավարները կարող են հավատարմագրել 1 /մեկ/ լրագրող և 1 /մեկ/ ֆոտոթղթակից :

3.4. Տեսաբովանդակություն պարունակող Մեդիա միջոցները կարող են հավատարմագրել 1 /մեկ/ օպերատոր:

3.4. Ֆոտոգործակալությունները կարող են հավատարմագրել 2 /երկու/ ֆոտոթղթակից:

3.5. Բացառություն են կազմում միայն ազգային հավաքական թիմերի պաշտոնական հեռարձակողն ու հովանավոր եւ գործընկեր Մեդիաները, որոնց հավատարմագրման ենթակա լրագրողների թիվը որոշում է ՀՖՖ-ն՝ ըստ անհրաժեշտության:

ՀՈՂՎԱԾ 4

4.1 ՀՖՖ-ն պարտավոր է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ տրամադրման կամ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ՀԱՅՏ-ի մերժման մասին որոշումները ընդունել ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-երի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան **Միջոցառման** անցկացման օրվանից երկու օր առաջ:

4.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ը կարող է մերժվել.

4.2.1. Հավատարմագրման ենթակա **Միջոցառման** անցկացման վայրի տեղերի սահմանափակ լինելու դեպքում՝ պահպանելով սույն **Կարգով** սահմանված առաջնահերթության սկզբունքը:

4.2.2. Եթե տվյալ Մեդիան եւ/կամ Մեդիայի ներկայացուցիչը իրենց հրապարակումներում, տեղեկատվական նյութերում եւ իրենց Մեդիա արտադրանքում օգտագործել եւ տարածել են ոչ ճիշտ, խեղաթյուրված, փաստերով չհիմնավորված, վարկաբեկող տեղեկություններ ֆուտբոլի, ազգային հավաքական թիմերի, ՀՖՖ-ի, ֆուտբոլային ընտանիքի միջոցառումների հետ կապված:

4.3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ինչպես տրամադրման, այնպես էլ մերժման վերջնական որոշումը պատկանում է բացառապես ՀՖՖ-ին:

4.4. ՀՖՖ-ն պարտավոր չէ բացատրություններ տալ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ինչպես տրամադրման, այնպես էլ մերժման դեպքում:

4.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ տրամադրման վայրի եւ ժամանակի մասին Մեդիայի ներկայացուցիչները տեղեկացվում են ՀՖՖ պաշտոնական կայքի միջոցով:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՄԵԴԻԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 5

5.1. ՀՖՖ-ն տրամադրում է չորս կարգի ՀԱՏՈՒԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ:

Ա/ «Մամուլ» /Press/, Բ/»Ֆոտո» /Photo/, Գ/ «Հեռուստատեսություն» /TV/, Դ/ «Ռադիո»/Radio

5.2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողն իրավունք ունի լինել ՄԻԱՅՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա նշված գոտիներում:

5.3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները պարտավոր են բարեխղճորեն օգտվել ՀՖՖ-ի տրամադրած բոլոր միջոցներից, Մեդիա հարմարություններից եւ չչարաշահել իրենց իրավունքները:

5.4. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները պարտավոր են հարգել Միջոցառման մասնակիցների, կողմերի, ՀՖՖ-ի, ֆուտբոլային ընտանիքի անդամների, բոլոր ներկաների իրավունքները, շահերը, հեղինակությունը:

5.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները եւ նրանց հավատարմագրած Մեդիայի ղեկավարները պարտավոր են ստուգել իրենց կողմից տարածվող տեղեկատվության հավաստիությունը, օգտագործել միայն իրականությանը համապատասխանող փաստեր եւ տեղեկություններ, պահպանել բոլոր կանոնները, լրագրողական էթիկայի միջազգայնորեն ընդունված նորմերը:

5.6. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները եւ նրանց հավատարմագրած Մեդիաները պարտավոր են չտարածել ոչ ճիշտ, խեղաթյուրված, փաստերով չհիմնավորված, վարկաբեկող տեղեկություններ ֆուտբոլի, ազգային հավաքական թիմերի, ՀՖՖ-ի, ֆուտբոլային ընտանիքի միջոցառումների հետ կապված:

ՀՈՂՎԱԾ 6

ՀՖՖ-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. ՀՖՖ-ն պարտավոր է

6.1.1. Հնարավորություն ստեղծել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների խաղացողներին եւ պաշտոնատար անձանց, ՀՖՖ-ի, հավատարմագրման ենթակա միջոցառումների մասնակիցների հետ Մեդիայի հավատարմագրված ներկայացուցիչների շփման համար՝ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կարգավորող փաստաթղթերի, ուղեցույցերի համապատասխան:

6.1.2. Մեդիայի հավատարմագրված ներկայացուցիչներին տրամադրել տեղեկատվություն, միաժամանակ պաշտպանելով Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների, ՀՖՖ-ի, ֆուտբոլային ընտանիքի հավատարմագրման ենթակա միջոցառումների մասնակիցների իրավունքները:

6.1.3 Մեդիայի հավատարմագրված ներկայացուցիչների համար ստեղծել Մեդիա հարմարություններ:

ՀՈՂՎԱԾ 7

ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ

7.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 22-ից: